# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N2

## «ՀՀ ԱՆ ԱԱԻ USAID-ԳՀԾՁԲ-15/24-17/1» ծածկագրով գնման պայմանագրի

ք. Երևան «08 » դեկտեմբեր 2017թ

ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ն, ի դեմս Ա. Բազարչյանի, (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԲՈՆԱՊ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Օ. Գրիգորյանի, (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, հիմք ընդունելով 25.09.2017թ կնքված N ՀՀ ԱՆ ԱԱԻ USAID-ԳՀԾՁԲ-15/24-17/1 ծածկագրով գնման պայմանագրի 7.5-րդ կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

### 1. Համաձայնագրի առարկան

**1.1** Կողմերը, փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն Համաձայնագիրը՝ սահմանելով Պայմանագրով սահմանված ծառայությունների կատարման ծավալների քանակի նվազում:

### 2. Գինը և վճարման կարգը

2.1 Սույն համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է 2787520 (երկու միլիոն յոթ հարյուր ութսունյոթ հազար հինգ հարյուր քսան ) ՀՀ դրամ, որը ներառում է Համաձայնագրի կատարումն ապահովելու նպատակով կատարվելիք բոլոր վճարները, այդ թվում նաև հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները: Համաձայնագիր 1-ի գումարը՝ 2998320(երկու միլիոն իննը հարյուր իննիսունութ հազար երեք հարյուր քսան)դրամ բառերը փոխարինել 2787520(երկու միլիոն Յոթ հարյուր ութսունյոթ հազար հինգ հարյուր քսան)դրամ բառերով:

2.2 Պատվիրատուն ծառայության դիմաց վճարումը կատարում է դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով՝ հանձնման - ընդունման արձանագրության հիման վրա, համաձայնագրի վճարման ժամանակացույցով՝ հավելված N2-ով նախատեսված ժամանակահատվածում, բայց ոչ ուշ, քան 15.12.2017թ:

### 3.Այլ պայմաններ

3.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

3.2 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով:Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.3 Սույն Համաձայնագրում փոփոխություններ լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

3,4 Սույն համաձայնագիրը կազմված է 2(երկու ) էջից, կնքվում է հայերեն ՝2 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

### 3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ և ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Ս Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ | «ԲՈՆԱՊ» ՍՊԸ |
| ք. Երևան, Կոմիտաս 49/4 | ք.Երևան,Արաբկիր 41 փող.12/1 |
| ՀՎՀՀ 00011624 | ՀՎՀՀ 00064653 |
| «Հայէկոնոմբանկ» Արաբկիր մ/6 | «Ինեկոբանկ» ՓԲԸ |
| ՀՀ 163058012812 | ՀՀ 205002231905 |
| Տնօրեն ------------ Ա.Բազարչյան | Տնօրեն ------------ Օ.Գրիգորյան |